

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցզով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԶՐԾՐՈՒՆԻ

«ՄԵԼԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յունիսի 1-ից մինչև տարւայ վերջը
կարժենայ ՎԵՑ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
յունիսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագիր առաքումը
չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցան-
կացողները վճարում են Մէկ ռուբլի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համաձայնութիւններ և մերձեցումներ—ՆԵՐ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարդասիրական գործեր.
Դարձեալ բոքսին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Գա-
ղաքական տեսութիւն.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԵՐՁԵՑՈՒՄՆԵՐ

Անգլիական Էդուարդ Թագաւորը շու-
տով պէտք է տեսակցութիւն ունենայ
գերմանական Վիլհելմ կայսրի հետ: Քա-
ղաքական մամուլը արամադրութիւն է
ցոյց տալիս այդ տեսակցութեան մէջ
տեսնել մի որոշ քաղաքական ծրագիր:
Սակայն եղած ենթադրութիւնները մինչև
այժմ շատ անորոշ և նոյն իսկ հակասա-
կան են: Մի բան միայն անկասկած է—
դա ներկայ քաղաքական րօպէի լրջու-
թիւնն է: Միջազգային շատ խնդիրներ,
որոնք տարիներ շարունակ քնած և կար-
ծես մեռած գրութեան մէջ էին, նորից
արթնանում են և նետում քաղաքագէտ-
ների առաջ մի շարք էական և երկրոր-
դական հարցեր:

Եւրօպական պետութիւնները, ինչպէս
յայտնի է մեր ընթերցողներին, վերջին
ժամանակներս գործադրում են մասնա-
ւոր համաձայնութիւններ այս և
այն խնդրի վերաբերութեամբ և զբաղում
մի որոշ չափով լուծում թուրքիայու-
թիւններ և հակառակութիւններ: Անցեալ
տարի Ռուսաստանը և Աւստրիան Միւր-
շտէգում կայացրին մակեդոնական
հարցի վերաբերութեամբ մի համաձայ-
նութիւն, որը հաւանութիւն գտաւ և
միւս եւրօպական կառավարութիւնների
կողմից: Այնուհետև մենք տեսանք անգլո-
ֆրանսիական, ֆրանկո-իտալական, անգլո-
իտալական մասնաւոր համաձայնութիւն-
ներ և մերձեցումներ, որոնք գործնական
լուծում տուին միջազգային մի շարք կա-
րուր խնդիրներին:

Անգլիայի և Գերմանիայի միջև մի քանի
տարի արանից առաջ կազմվել էր որոշ հա-
մաձայնութիւն գաղթականների կամ կօլ-
ոնիաների վերաբերեալ մի քանի հարցերի
առթիւով, սակայն նա ընդարձակ բովան-
գակութիւն չունէր: Անգլիան և Գերմա-
նիան այնուհետև փոքր ինչ անհամաձայ-
նութիւն ունեցան Բաղդադի երկաթուղու
շահագործութեան հարցում: Այժմ քննե-
լու և լուծելու շատ խնդիրներ կան, սա-
կայն կը ցանկանան արդեօք այդ երկու
պետութիւնները այժմ պայմանաւորվել
բոլոր խնդիրների վերաբերութեամբ: Թէ
հեռաւոր և թէ Մերձաւոր Արևելքը ա-
ռաջ են մղել մի շարք ենթադրական
հարցեր, որոնց լուծման համար պէտք է
պատրաստ լինել նախօրօք: Այլ ևս չենք
խօսում ծովաներքի, ամրակայարանների,
նեղուցների վերաբերեալ զանազան խն-
դիրների մասին:

Իւրաքանչիւր պետութիւն ուշի ուշով
հետևում է քաղաքական աշխարհի դէպ-
քերին և ձգտում է ապահովել իր համար
ազգեցութեան շրջան այն երկիրնե-
րում, որոնք ներկայումս ենթակայ են
եւրօպական արդիւնադործութեան և զին-
ւորական ոյժի հեղինակութեանը: Սակայն
որպէս զի փոխադարձ շահերը խիստ կեր-
պով չընդհարվեն, իւրաքանչիւրը ծրա-
գրում է իր համար այն զինուորների քա-
նակը, որ կարող է անել ներկայ հան-
գամանքներում:

Կունենայ արդեօք անգլո-գերմանական
մերձեցումը էական արդիւնքներ, թէ կը
սահմանափակվի շատ փոքր ծրագրով, դա
ապագայի գիտնականքն է. բայց առանց
լուրջ ուշադրութեան չէ կարող անցնել
այն, որ մասնաւոր համաձայնութիւններ
կայացնելու պահանջը օրէցօր աւելանում
է և առաջին համաձայնութիւններին կա-
րող կը լինեն յաջորդել միւսները: Մի-
ջազգային կնճիռները շատացել են և պե-
տութիւնների անդորրութեան համար կա-
րելու է, որ լուրջ միջոցներ մշակվեն
նրանց նպատակայարմար լուծումը արա-
դացնելու:

Մասնաւոր համաձայնութիւնների և
մերձեցումների շարժումը ներկայումս քա-
ղաքական աշխարհի աչքի ընկնող երևոյթ-
ներէն մէկն է, որը, պէտք է ենթադրել, ա-
ւելի խոշոր համաձայնութիւնների համար
պէտք է հող պատրաստէ ապագայում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱՍՐԱԿԱՆ ԳՐԾԵՐ

«Աշխատանքի տուն», «Ճաշարան», «Ջրի և
էփանազին բնակարաններ», «Ապաստարան»—
անա այն հիմնարկութիւնները, որոնցով Բա-
գուի հայոց Մարդասիրական ընկերութիւնը
որոշեց օգնել կարօտեալներին և տառապալ-
ներին՝ ազնիւ, շիտակ ճանապարհով ապրուստ
վաստակել և չէ դիմել մուրացկանութեան:
Այդպիսի մի հոյակապ ձեռնարկութեան հա-
մար, որտեղ պէտք է լինէին բազմաթիւ բա-
ժանմունքներ, արհեստանոցներ, հարկաւոր էր
ունենալ սեփական շինութիւն, յարմարեցրած
առողջապահական պայմաններին: Այդ գոհա-
րութեան առաջ կանգ չառաւ ընկերութիւնը.
վարչութեան ջանքերի շնորհիւ, քաղաքը տուեց
ձրի հող քաղաքի մի ծայրում, մի առողջա-
բար և բաց տեղում, որտեղից բացվում է
լայն հորիզոն. գտնվեցան բարեխաղեր, որոնք
յանձն առան տալ շինութեան ծախքը. դրանք
էին հանգուցեալ Գ. Թումայանի (երբեմն նա-
խագահ ընկերութեան) ժառանգները և Լ.
Սերգէյեան:

Եւ անա քաղաքի նուիրած հողի վրա մի
տարվայ ընթացքում (1902 թ. յունիս—1903
թ. յունիս) բարձրացաւ մի գեղեցիկ, բարա-
շէն, եռյարկանի փառաւոր շինութիւն՝ Գ.
Թումայանի անուան նուիրված, որի վրա
ծախք եղաւ 34,103 ռուբլի, իսկ բակում, տան
թիկ վրա շինվեց մի յարկանի տուն, յանուն
Լ. Սերգէյեանի, որի վրա ծախս եղաւ 12,268
ռուբլի:

Այդ երկու շինութիւնների մէջ գետեղված
են «Աշխատանքի տունը», իր 4 բաժանմունք-
ներով, պահեստ, անկեղանոց՝ պատահական
գիշերողների համար, ճաշարան, 48 սենեակ
չքաւորների բնակութեան համար, երկու մեծ
խոհանոց, մի փոքր հիւանդանոց: Վարչութիւ-
նը գետ մտադիր է մի որբանոց ևս բանալ,
որի համար նորիս գիմը է Բագուի պ. նա-
հանգապատին թոյլտուութիւն խնդրելու համար:

Եւ այցելեցի այդ համակերի Տունը վար-
չութեան նախագահ պ. Ս. Յարութիւնեանի
հետ. տեսայ, ինչպէս տղաներ և աղջիկներ,
փոխանակ փողոցում թափառելու, փողոցի
անբարոյական կեանքին ենթարկվելու, աշխա-
տում են այդտեղ որը կազմաբարութեամբ
պարապելով, որը թղթէ տպագրւներ և կա-

պոց, կամ ձկնորսական ցանցեր պատրաստե-
լով, պակեա մաքրելով և քրքրելով. տեսայ,
ինչպէս անտէր, անօգնական մնացած պառա-
կանայք, կամ գաւակներով ծանրաբեռնված
չքաւոր այրիներ աշխատում են այդտեղ և
փոխարէնը ստանում լաւ, մաքուր, օգաւոր
սենեակ, ճաշ, թէյ. տեսայ, ինչպէս ժամանա-
կաւորապէս անգործ, պարապ մնացած եււոր-
ներ գտնում են այդտեղ ժամանակաւոր ա-
պաստան, մինչև կարողանան իրանց համար
գործ և պաշտօն գտնել: Մի խօսքով, ես տե-
սայ ինչպէս այդտեղ ցաւերը ամոքվում են,
բայց ամոքվում են այնպէս, որ ցաւատը իս-
կական բարոյական միթարութիւն է գգում
և մի և նոյն ժամանակ գգում է, որ ինքը
ձրիակեր չէ, այլ ինքն ևս օգնում է այն հիւ-
նարկութեան, որը իրան պատասպարում և
խնամում է:

Որբանոցի հաստատութիւնը աւելի կընդար-
ձակէ Մարդասիրական ընկերութեան Տան
համակերի գործունէութիւնը և նա կարող կը
լինի մտածել նաև որբերի կրթութեան մա-
սին:

Եւ գեղեցիկ, հոգեպարար տպաւորութեամբ
հեռացայ այդ շինութիւնից, որ ապացուցա-
նում է, թէ ամենանիւ շրջանակում ևս մար-
դիկ կարող են շատ օգտակար, բարի գործեր
կատարել. բաւական է ունենալ եռանդ և ան-
կեղծ ցանկութիւն:

Յարգանք և պատիւ այդպիսի մարդկանց և
վարիչներին:

Նոյնպիսի հոգեպարար, սիրովիլ տպաւո-
րութիւն ստացայ ես, երբ մայիսի 23-ին,
«Մշակի» խմբագրութեան կողմից գնացի այ-
ցելելու խուլերի և համբերի դպրոցը Սաղի
թաղում:

Մի համետ, բայց մաքուր շինութեան մէջ
պատասպարված են 22 երեխաներ—ի ծնէ խուլ
և համբ. նրանք ոչինչ չեն լսում, չը գիտեն
ինչ է մարդկային ձայնը. համբ են ծնվել,
չեն խօսում, ինչպէս մենք, բայց մարդասի-
րութիւնը, մարդկային հաստութիւնը այդտեղ
ևս գտել է միջոց սիրովիլ, հմուտ, մարդասէր և
կարեկիր ուսուցիչը կարողացել է յամառ, տո-
կուն ջանքերով սովորեցնել նրանց հասկանալ
շրթունքների շարժումից, թէ ինչ է խօսում
գրիմացիւն և, հասկանալով, պատասխանել:
«Դու հայր ունե՞ս», հարցնում է ուսուցիչը:
Խուլ-համբը չէ լսում, բայց շրթունքների
շարժումից հասկանում է և պատասխանում.
«Ես հայր չունեմ»: Նա խօսել չը գիտէ, բայց
հարցմունքին տալիս է ճիշդ պատասխան, եր-
բեմն պոռալով, երբեմն շատ կամայ, որովհե-
տե նա չէ լսում ձայն: Դա էլ շատ մեծ թե-
թեթութիւն է, որ ի ծնէ խուլ ու համբը կա-
րողանում է ձեզ հասկանալ և պատասխան
տալ:

Եւ անա այդ խուլ-համբերը, որոնք կամ
որբեր են, կամ ընտանեկան յարկի տակ ապ-
րելով ճնշում են ծնողներին և պէտք է մի
աւելորդ բեռը լինէին նրանց համար, ապրում
են դպրոցի մէջ իբրև գիշերօթիկներ, ունեն
մաքուր ննջարան, ստանում են պարզ, բայց
անհրաժեշտ կերակուր, ուրախանում, հրճվում
են, խաղում են, սովորում են գրել, կարդալ,
հաշիւել և որ և է մի արհեստ, այնպէս որ կա-
րող են կեանքի մէջ իրանց ապրուստը գտնել
և բեռը չը լինել իրանց ծնողներին, ընտանիք-
ների համար, դառնալ նոյն իսկ հասարակու-
թեան պիտանի, օգտակար անդամ, որովհետև
շնորհիւ դպրոցի, նրանք հասկանում են ու-
րիշներին խօսածը, և կարող են պատասխանել
Այլ ևս նրանք չեն գգալ իրանց դժբաղդ, այլ
ևս ծնողները շարունակ չեն մորմոքվի այն
վշտով, թէ իրանց գաւակները թշուառ են:

Եւ այդպիսի մի համակերի, օգտակար հիւ-
նարկութեան գոյութիւնը մենք պարտաւոր
ենք մասնաւոր անհատներին եռանդուն ջանա-
սիրութեան: Դպրոցը թէև համարվում է թա-
ղուհի կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդօրօվնայի
հովանաւորութեան ներքո գործող աշխատան-

քի տների կօմիտէի վարչութեան վերաբե-
րեալ, բայց նրա բացման նախաձեռնութիւնը
պատկանում է մի մասնաւոր անհատի, պ. Ն.
Ի. Թամաշեանին: Նա ծախք ունի տարեկան
մօտ 7000 ռուբլի և այդ բոլորը հոգացվում է
հոգաբարձուների, նուիրատուների տուած և
այլ կամաւոր աղբիւրներից եկած միջոցներով:

Մնում է, որ Թիֆլիսի հասարակութիւնը
իր բարոյական և նուիրական պարտք համա-
րէ օգնել այդպիսի մի գեղեցիկ հիմնարկու-
թեան, որպէս զի նա կարողանայ պատասպա-
րել և այն բազմաթիւ դժբաղդ խուլ-համբե-
րին, որոնք սիրված են գաւառներում և վա-
րում են թշուառ, անմիթար կեանք: Միայն
մասնաւոր օժանդակութիւնները հնարաւոր
կը դարձնեն, որ 22 թիւը դառնայ 50, 100 և
հարիւրաւոր դժբաղդներ զգան այն սիրովանքը,
բարոյական միթարութիւնը, որը վայելում
են այժմեան դպրոցի 22 խուլ-համբերը:

Յարգանք և պատիւ լաւ, մարդասէր, բարի
գործին:

Հ. Առաքելեան

ԴԱՐՁՆԱԼ ԲՈՐՆԵՆԻՆ

(Նամակ Հաջի-Ղարայից)

Դարձեալ յայտնվեց մեզանում, սրանից 5
տարի առաջ մեր ամբողջ էջմիածնի գաւառի
գիւղերը ահի և սարսափի մէջ պահող չարա-
ճճի և արեւմաբոլ գաղան բորենին: Այս
խիստ վտանգաւոր գաղանի մասին տգէտ ժո-
վրդի մէջ գնաղան կարծիքներ են յայտնվում,
թէ դրանք այլակերպված էակներ են: Բնորոշ
են գաղանի չափազանց խորամանկութիւնը և
նրա առանձնայատկութիւնները՝ դարանամուտ
լինելու, մարդու վրա յարձակվելու և թռչնա-
ման 5—6 արշին բարձրութիւն ունեցող պա-
տեր բարձրանալու:

Վերոյիշեալ գաղանը ներկայ յունիս ամսի
մէկին գիշերով մեր հարեան Այալու թուր-
բաւակ գիւղում մտնում է տեղացիներից մէ-
կի բակը, յարձակվում է ընած տանտիրոջ
վրա, որը լինում է 40—50 տարեկան մի հակա
տղամարդ: Գաղանը իր սովորական ձևով բըռ-
նում է երեսից և բուզից, այնպէս որ բոլորո-
վին փակում է բերանը և սկսում է ինդդել,
բայց նոյն անկողնում պառկած պարսկուհին
արթնանում է մարդու խոռոցից և սկսում է
հաւար անել, որի ժամանակ գաղանը րօպէա-
պէս անյայտանում է, ծանր վիրաւորված թող-
նելով իր գոհին:

Ց. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

„Kav.“ պաշտօնական լրագրում կարդում
ենք. «Թիֆլիսում, Տիգրան Լազարեանի խմբա-
գրութեամբ հրատարակվող «Տարազ» շաբա-
թաթերթի ֆլատակար ուղղութեան պատճա-
ռով, Գովկասի իշխան կառավարչապետը, ցեն-
զուրական կանոնադրութեան 154-դ յօդուածի
ժանթութեան հիման վրա՝ անհրաժեշտ հա-
մարեց դադարեցնել այդ շաբաթաթերթը և
նրա յաւելումը «Աղբիւր» անաղբիւրը չորս ամ-
սով»:

Մենք յայտնել էինք, որ Ալէքսանդրօպօլում
նշանակված էին երկու դասախօսութիւններ
կաթնատնտեսութեան մասին: Դասախօսու-
թիւնները տեղի ունեցան կիրակի, յունիսի
6-ին, մէկը գիւղացիների համար առաւօտեան
12 ժամին, միւսը քաղաքացիների և գիւղա-
ցիների համար կէսօրից յետոյ ժամի 5-ին:
Դասախօս Ա. Քալաթիւնը բացատրեց ներկայ
եղողներին լեռնային տնտեսութեան և կաթ-
նատնտեսութեան զարգացման վերաբերեալ
այն մի շարք կատարելագործութիւնները, ո-
րոնք կարող են աշտոլութեամբ գործարկել
մեր գիւղական շրջանում: Դիւղացիները հա-
ւաքված էին մինչև տարւ գիւղից: Ունկընդիւ-
ների թիւը հասաւ 250-ի: Նրանց մէջ կային
և կանայք: Դասախօսութեան միջոցին գործ-
նականապէս ցոյց տրվեց սերգաստ կամ սե-

Երկրորդ կարևոր նիստը, ուր հարցազուգում եղավ Թիւրքիայում կատարվող դէպքերի և հայոց հարցի մասին, կայացաւ մայիսի 27-ին: Մինչև այդ նիստը Ֆրանսիական քանի լրագիրներ, Humanité», Բիյաուր օրաթը, «Temps» և անգլիական «Times» լրագիրները ընդարձակ տեղեկութիւններ էին տալիս ամսին և ժայիսի սկզբներում Սաադուտ և Մուշի դաշտի վրա կատարված տեղեկան դէպքերի մասին, տեղեկութիւն որոնք պարզ ցոյց էին տալիս, թէ Թիւրքիայում կամենաւ են վեր սկսել 95 և 96 թիւ կաննիքի ահաւի դէպքերը: Այդ տեղեկութիւնները արտառուկեցին ռուսաց լրագիրը և մենք ևս արդէն առաջ բերինք «Մշակույթ»: Մի և նոյն ժամանակ «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագրի մէջ տպվեաւ առաջնորդող յօդուած, որի մէջ այդ լրագիրը

գիրքը գործերն ճիշդ և արագ տեղեկություններ տալու նպատակով և պատերազմական գործողությունները ընթացքի մասին անմիտ լուրերի տարածման առաջին անհետև համար: Լը-բազիլը ուղարկվում է ընդ որ գործառնական զառապային կամ թուրքիկ պատեր միջոցով: Տպարանը, գրասենյակը և խմբագրությունը ղեկավարվում են և աշխատում են վա-գոններում և կերթան գործի հետ միասին: Լըբազիլը և իր համար: Այսօր ընդհանուր բաժանորդագրություն է յայտարարված Կա-բուլի համար ընդ որ տեղերում, Մանջուրիայում և արևմտահայաստանում: Գիրքը կեն տարվայ համար վեց բուրլի է: «ВЕСТНИК» լրագրից Լեոնտա-նում ահազին աշխուրթին ունի: Աշխատակ-ցում են գործի օֆիցերները և զինուորական թղթակիցները: Խմբագիր է նշանակված չի-նական անցավ պատերազմի ժամանակ զին-ուորական թղթակից Նանչվեցի: Այստեղ և-դանակը վատացավ: Անընդհատ անձրև է գալիս: Զանազաններին անանցանելի ցել է, որը կարող է երկար ժամանակ դանդաղեցնել եա-պոնացիների շարժումը:

ՀԵՆՐԻԿՅԱՆ: Ֆինլանդական զինեղա-նահանգապետի մարմին յուղարկալուծությունը տանից դեպի Ուստյանկի տաճարը տեղի կու-նենայ երկուշաբթի, յունիսի 7-ին: Հոգեհան-գատից յետոյ զինեղա-նահանգապետի մար-մինը արտակարգ գնացքով կուղարկվի Պետեր-բուրգ, ուր կը հասնի առաւօտեան 7 ժամին:

ԴԻԵՉԻԵՆ: Թագաւորի ոյժերը շարունակում են մեծանալ: Նա ճանապարհ ընկաւ Էմս: ՏՕԿԻՕ: «Բէյաթի գործադալութեան» թըղ-թակիցը հաղորդում է Վաֆանգուի մօտ տեղի յանցեցած կուր մանրամասն նկարագրութիւնը: Ռուսներն լաւագոյն դիրք ունէին, որով հա-ւասարակշիւում էր եապոնացիների թւական գերազանցութիւնը: Ռուսաց զիւրը գտնվում էր արևելքից դեպի արևմուտք և կտրում էր նեղ հովիտը, որով անցնում է երկաթուղին: և հասում է Ֆուչիոու գետը: Գնեցալ Օկուս գուրս մղեց ռուսներին լեռներից, ստիպելով կենտրոնանալ հովտի մէջ: Նախ յարձակում գործվեց ալ, իսկ յետոյ ձախ թիկ վրա: Կը-ռուր ձախ թիկ վրա յուսադատական էր: Ռուսները պահպանում էին դիրքը անյաղթելի քաջութեամբ և յետ քաջիցին միայն այն ժամանակ, երբ համարեա կատարեալապէս շըբ-ջապալում էին, թողնելով 600 սպանվածներ պատերազմի դաշտի վրա: Օկուս հրաման ար-ձակեց երեք զօրախմբերով յարձակում գոր-ծելու մայիսի 31-ին երկաթուղու գծով և Տա-սախո գետով, մի և նոյն ժամանակ հեծելա-զօրը գուրս եկաւ Բիցիլիօից: Կուրս սկսվեց յունիսի 1-ին կէսօրից յետոյ 3 ժամին թիւղա-նօթազուլութեան: Ռուսներն ունէին 98 թիւղա-նօթներ, որոնք պատարաւանում էին զօրի կրակով մինչև երեկոյ: Գիշերը եապոնացիներ-ը գրաւեցին բլուրը Տէուշիատունի և Վէն-շուատինի միջև, նոյնպէս մի բլուր Տայան-կուից դեպի արևմուտք: Եապոնական կեն-տրոնական զօրախմբի մի մասը ընթանում էր Ֆուչիօուի գետի երկարութեամբ և սաստիկ զնաւովում էր ռուսական կրակից, որի պատ-ճառով հետևակ արտիլէրիա ուղարկվեց նրա օգնութեան: Միացեալ ոյժը գուրս մղեց ռուս-ներին Տաֆանդալից, բայց հանդիպեց ռու-սական բաւարէականների կրակին Լիւանտանա-նում և Լոււվանիտանում: Եապոնացիները սա-կայն բռնեցին բարձունքները և զրու-թեան տէրերը դարձան, այն ինչ եապո-նական ալ թիւը սաստիկ զնաւովում էր ռու-սական ձախ թիկ կրակից: զինեղալ Օկուս ստիպված էր երկու անգամ օգնական զօրերը ուղարկել պահեստի զինուորներից եապոնական հետևակ զօրերին: Ռուսները մի քանի յուսա-հասական հակա-յարձակումներ արեցին: Ա-մենակրիտիքական վայրկեաններում եապո-նական հեծելազօրը մի կողմ թողեց ռուսա-կան զիւրը և յարձակում գործեց ձախ թիկ վրա: Ռուսական օգնական զօրերի գալուց յետոյ զիւրը պաշտպանութիւնը յամառու-թեամբ շարունակվում էր, մինչև որ ճակա-տակողմերը և երկու թիւերը ուղարկուծութեան ինթարկվեցին ամեն կողմից: Երբ ռուսները սկսեցին յետ քաշվիլ, եապոնական հեծելա-զօրը աշխատում էր հալածել նրանց, բայց արգելքները ստիպեցին նրան դադարեցնել հալածանքը: Եապոնացիները կորցրին 900 մարդ, որոնց թւում 8 օֆիցերներ սպանված և 14 վիրաւորված: «Բիցիլիօ» փոխադրող նաւը շրջադրվեց անհրաժեշտ յետոյ, ռուսները հե-ռացան Սոկիալիօի ուղարկեամբ: «Եալիզա» և «Անաէ» առաքաւաւորը նաւերը յունիսի 3-ին շրջադրվեց և արված Օկու և Կօշիմա կըղ-զիների միջև: 37 մարդիկ աղաւթեցին և հա-

սաւ Եսաշի: Վարդիօստօկեան էսկադրայի ձեռքով շրջադրվեց արած նաւերի ընդհանուր քանակութիւնը հասնում է հինգի: Վարդիօս-տօկեան էսկադրան անհետացաւ հօրիզոնում Գէնաշիսակի հրուանդանի բարձրութեան վրա: Նա գնում էր դէպի հիւսիս: Ոչ ոք չը գիտէ, թէ արդեօր սպանում է նրան Կամիմուրա ծո-վապետի էսկադրան Վարդիօստօկի մօտ: Կա-միմուրան հնարաւորութիւն ունէր հասնել Վարդիօստօկ ռուսներից առաջ և ծովային պատերազմի բռնվել նրանց հետ, թէպէտ մա-ռախուղը կանգնեցնում է եապոնացիներին: Ջրանցքում եապոնական 13 փոխադրող նա-ւեր կային, երբ «Մադօմարու» և «Միտաշի-մարու» նաւերը բռնվեցին: Ռուսական էսկա-դրայի աշխուրթինը առաջացրեց Կամիմու-րայի դատապարտութիւնը: Եապոնացիները յիշեցնում են, որ նա ձեռքից բաց թողեց ռուսներին Գէնաշիսի մօտ, երբ շրջադրվեց արված «Կինշիօմարու» նաւը: Ջայներ են լսվում, որ եթէ նա թող կը տայ այժմ էս-կադրայի վերադարձը Վարդիօստօկ առաջ կո-րուստներին, այն ժամանակ նա կամ պէտք է հրաժարական տայ կամ պէտք է անձ-նապաշտութիւն գործէ: Նրան ուրիշով փո-խարինելու համար ժողովրդական շարժու-մը մեծանում է: հասարակական կարծի-քը մանաւանդ յուզվեց այն ժամանակ, երբ տեղեկութիւն ստացաւ, որ ռուսները բռնե-ցին անգլիական ածխագործին, որը Սոկիալի-օից գնում էր դէպի հարաւ և տարան նրան Վարդիօստօկ որպէս պրէյ: Ակնհեր է թւում, որ «Միտաշիմարու» փոխադրող նաւը սկանջ չը դրեց ռուսների հրամանին՝ կանգ առնել և այդ պատճառով ռուսները ուղարկուծ էին ճանապարհորդներին: 25 պարզված, որ ռու-սները ռուսներ արձակէին հեռացող աղաւթում մակոյկների վրա: «Իշի Տէլէգրաֆ» լրագրի թղթակիցը, որ գտնվում էր «Մանջուրիա» շրջանաւի վրա, այցելեց ռուս զինեղներին Մա-ցուեանում: վերջինների թիւը հասնում է մին-չև 592, որոնց թւում 28 օֆիցերներ: Գերե-ները 241 զինուոր գերե են տարված Եալուր և Նանշանի մօտ: Ռուսները կատարեալ յար-մարութեամբ տեղաւորված են տաճարներում: օֆիցերներն ունեն եւրօպական ձեւով սարքված բնակարաններ: զինուորներն ապրում են եա-պոնական սովորութեամբ և ստանում են ռու-սական սև հաց:

ՆԱԲԱԳԻՐ: ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԼԹԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի առևտրական դպրոցի տե-սուղ յայտարարում է, որ պատրաստական դասարանի կրտսեր բաժան-մունքը իրանց զաւակներին տալ ցտնկացող-ների խնդիրների ընդունելութիւնը կատար-վում է ըրոր ատենական օրերում դպրոցի գրասենյակում առաւօտեան ժամը 9-ից-1-ը: Պատրաստական դասարանի կրտսեր բա-ժանուման ընդունվում են առանց քննութեան 7-9 տարեկան տղաներ: Կ. Ե. 2. 1-3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Գր. Տեր-Գրիգորեանց

ընդունում է հիւանդներին-ներքին (մասնաւո-րապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւննե-րի. ունի ռէնտգէնեան կաբինէտ. 154. Միքա-յելեան պրօպագէտ, տէլէֆօն 825. (2. Կ. Ե. 2.) 44-105

Մի քնտելիգէնտ պարոն ստանձնում է գը-րական աշխատանք-թարգմանութիւն (ռուսերէնից), սրբագրութիւն, արտագրու-թիւն և այլն: Նաև պարագլուծ է փորքիկ ա-շակերտների հետ: Դիմել-Թիֆլիս, «Գուու-տէնբերգ» գրաւաճառանոցը, 5. Ե. 1-ին: (2. Կ. Ե.) 2-3

ՀԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՑՈՒՄ»

- Վ ա ճ ա ո լ ու մ են՝
1. Արբայի տպագրած պատկերազարդ մեծ Աստուածաշունչ, կաշեկապ և ոսկեզօծ 120 ռ.
 2. Թուրաններ, կազմւալ 10 հատոր. 35 »
 3. Դադունիք Բարդու 8 հատոր. անկապ 16 »
 4. Պրաժմոն դերկում անկապ 12 » . 12 »
 5. Ժօզէֆ Պարսամ 8 հատոր. 10 »
 6. Մօսթէ Բիւթիլի որդին 6 » . 7 »
 7. Թագուհւոյն մանեակը 4 հատոր. 5 »
 8. Միւրանոյշ, հեղ. տիկ. Տիւսաբի. 5 »
 9. Մովսէս Սորենայի պատմութիւն, վիճակի. կազմած 6 »
 10. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Միւրանի Էմինի. 2 »
- Ճ ա ն ա պ ա Ր հ ա ծ ա խ ս ը գ ն ո ղ ի վ Ր ա ի (ու. Կ. Ե.) 2-3

Բժշկ. Բ. Նաւասարդեան
որ գտնվում է ՐՕՍՏՕՎ քաղաքում
Հիւանդներին ընդունում է 11-1 ժ. առ. և 7-8 ժ. երեկոյան:
Б. Садовая, 136, д. Бакалова.
(и. Կ. Ե. 2.) 22-100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Ա. ԲԱԹԱՆԵԱՆ

(ներքին և ներվային հիւանդութիւններ)
Ընդունում է հիւանդներին Կովկասեան հան-բային շրջերում-Պետրոգորսկում. Верхний буварь, № 14, д. Кн. Гирей. (Կ. Ե. 2.) 8-20



Պրովիզոր Ա. ՍԱՐՈՒԽՆԵԱՆՅԻ

Բ Օ Ր Օ - Ն Ա Ֆ Թ Ա Լ Ա Ն

Ն ո Ր Ն Ի Լ Թ Ը

Կատարեալապէս փշացնում է զլիւր քեփը, ամրացնում է մա-դերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իր բնական ու հաստատ տեսքը: Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրեւ ոչ մի ֆաւսակար նիւթ չը պարունակող:

Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами: Тифлисе, Баку, Батумь, վաճառվում է և Ռուսաստանի ղեղա-տններում և ղեղավաճառատներում:

Արժէքն 1 ռուբլի 25 կօպէկ:
(Կ. 1 ան.) 2-50

Ա Ռ Ե Ի Տ Ր Ը Կ Ա Ն Տ Ո Ւ Ն

„ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ԸՆԿ.“

Բ Ա Գ Ո Ւ

Իր սեփական պահեստներում մշտապէս ունի

երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкован-ное) երկաթի երկաթե գիւղեր, ջրհան մեքենաներ «Պոմպեր» և «Փուպեր», ռուսական գաղափի խողովակներ և զբանց զօղաւորող մասեր, ֆիւրիլաներ և այլն: Գուրգըր գնալուան տեսակի (станки токарные, сверлильные, строгальные и др.): Մամուլներ ծաղիկ և ուրիշ տեսակներ: Պողպատ գուրգըր, կարոցներ և գործիքներ շինելու համար: Մետաղայ փշեր, աղւս անձալ (согнетпорный), «Գէնթոգ» և կաւ, բեռներ (заклепки котельные, пис-тоновые): Գամբ գնալուան տեսակի, պտուտակներ (болты) և գալուներ, պրիւն թիւթաւոր և կաւերնով, պղնձե խողովակներ, թուլէ ափսայած (асфальтированные) խողովակներ ջրուղիների համար և զբանց զօղաւորող մասեր: Անագ ձօղաւոր, արձն թիւթաւոր և կտորներով, զինի թիւթաւոր և այլն: Պարագանիս (арматура) և լիճակ, բրնձիկայ և ձուլածոյ: Գործիքներ գնալուան տեսակի, բետինե առաքաններ, ցեմենտ. նմանապէս տեղեկութեան ամեն տեսակի մետաղներ և իրքեր:

Ընդունում է լիւրիկ կառուցում տախտիկ, բուրգ լուսնող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիկական պիտանքների վերաբերեալ: Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս: Արժէքների ցուցակները ուղարկվում են ձերաբար:

(Կ. 1 ան.)

Կենտրոնական Գրաւաճառանոցում վաճառվում են

հ ե ա և ե ա լ ն ո Ր գ ր ք ք ք ք

- Բուրուդեան Ա. բժ., Մնապաշտութիւն և Կախարդութիւն, Պետր. 1904 թ. գ. 20 կօպէկ:
Ենգիլբաեան Գաւ., Սուտի հոգեբանութիւն, Թիֆլ. 1904 թ. գ. 10 կ.
Զաբել, Ճշմարիտ մեծութիւնը (արևելեան աւանդութիւն), Պետր. 1904 թ. գ. 7 կ.
Խաչկունց Ի., Հայոց կրօնական բանաստեղծութիւն, Թիֆլ. 1904 թ. գ. 60 կ.
Խուսկիլաւե, Գերեզմանատանը (էսկիլ), Թիֆլ. 1904 թ. գ. 3 կ.
Կարապետեան Յով., Բրիտանիոյ Կարա-Մուրգա (նրա կեանքն ու գործունէութիւնը) 1854—1902, Թիֆլ. 1904 թ. գ. 60 կ.
Համբարձումեան Հ., Անհունի էջերում, բանաստեղծութիւններ, Պետր. 1904 թ. գ. 60 կ.
Ղազարեան Մ., Այնտեղ էլ պատեղ էլ (մի պատկեր հայ գաղթականների կեանքից) Պետր. 1903 թ. գ. 10 կ.
Մեծասուրեան Դ., Ընտրութիւն կաթնատուների կամ կաթնոտ կովերը ճանաչելու միջոց-ները, 26 պատկերով, Պետր. 1904 թ. գ. 15 կ.
Միսիլիա Մուսա, Կնոյ գաղափիրը, պատմութեամբ, Թիֆլ. 1904 թ. գ. 3 կ.
Մեկնեա, Կնոյ վրէժը (էտիւլ), Թիֆլ. 1904 թ. գ. 3 կ.
Մանեգապցա Պ., Միւրոյ միւրերը և նոյնա ծագումը, Աղբը. 1903 թ. գ. 10 կ.
Զիգիսեան Ն., Փուլտօն և Ստեֆանօսօ—շոգիւնաւի և շոգիկաւոր հնարողները (պատկերա-գաղթ), Թիֆլ. 1904 թ. գ. 15 կ.
Պետրով Գր. Բն. Աւետարանը իբրև մի կեանքի հիմք, Թարգմ. Հ. Գեղեկեանի, Պետր. 1904, 20 կ.
Զամբաղեան Զ. Թարգմ. Մաքսիմ Գորկիի, ա. գրքովի—Գորկու կենսագրութիւնը, Ընթերցող, Տաճկաստանում, Զանձրութիւն, Թիֆլ. 1904 թ. գ. 20 կ.
Մաքսիմ Գորկիի, բ. գրքովի—Մի անգամ աշխարհ, Սանը և իւր որդին, Լիւկիւրներ, Թիֆլ. 1904 թ. գ. 10 կ.
Սուրբ Էջմիածին 303—1903 պատկերազարդ նկարաւորութիւն, Միսիլիանների շքեղ հրա-տարակութիւն, Վիեննա. 1903 թ. գ. 1 ռ.
Սեղաւեան Ա. Եպս. Հայաստանիայց եկեղեցու պատկերազարդութիւնը, պատմական տեսու-թիւն, մ. ա., Պետր. 1904 թ. գ. 1 ռ. 50 կ.
Տ.-Ն. Ե. օր., Փիղ, նուէր մանուկներին, Թիֆլ. 1904 թ. գ. 8 կ.
Փալապեան Վ., Ալեքսի, պատմական պարսիկների կեանքից, Թիֆ. 1904 թ. գ. 50 կ.
Մեծ փրկանք և աղիւծի մահը, Թիֆլ. 1904 թ. գ. 3 կ.
Արմուրի Վ. բժ., «Առողջապահիկ Թերթ»-ի 15-րդ համարը տաւանձին 15 կ. և 16-րդը 10 կ.
Դիմել՝ ВЪ Тифлисе, въ Центральную Книжную Торговлю. (Կ.) 4-5